

ՏԵՂԵԿԱԼՔ

2009 թ. 1-ին եռամսյակում ՀՀ-ում հանցավորության վիճակի եւ ոստիկանության կողմից դրա դեմ տարվող պայքարի արդյունավետության մասին

2009 թ. 1-ին եռամսյակում ՀՀ ոստիկանությունը շարունակել է ակտիվ աշխատանքը լատենտային բնույթ կրող հանցագործությունների հայտնաբերման, ինչպես նաեւ հանցագործությունները հաշվառումից թաքցնելու արատավոր գործելաոճը բացառելու ուղղությամբ, ինչով էլ մասամբ պայմանավորվել է հանրապետությունում գրանցված հանցագործությունների ընդհանուր թվաքանակի կտրուկ աճը՝ 57,1%-ով (2008 թ. 1-ին եռամսյակում՝ 1844, 2009 թ. 1-ին եռամսյակում՝ 2897): Նման աճին նպաստել են նաեւ մասնավոր մեղադրանք կազմող եւ տուժողի բողոքի բացակայության պարագայում հաշվառման վերցված 480 դեպքերը:

2009 թ. 3 ամսում՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, ծանր եւ առանձնապես ծանր հանցագործությունների մասնաբաժինը նվազել է, համապատասխանաբար կազմելով 33,8% եւ 1,8%:

Հիմնական հանցատեսակներից 2009 թ. 1-ին եռամսյակում՝ 2008 թ. 1-ին եռամսյակի համեմատությամբ, աճ է արձանագրվել սպանության փորձերի (2-6), բռնաբարության եւ բռնաբարության փորձերի (2-3), դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելու դեպքերով (89-ից 244), այդ թվում՝ ծանր (50-ից 53), ինչպես նաեւ ավազակության (31-41), կողոպուտի (20-40), գողության (513-764), այդ թվում, բնակարանային (147-226), խարդախության (74-128), յուրացման կամ վատնման (8-50), տրանսպորտային միջոց փախցնելու (13-19), խուլիգանության (36-ից 74) եւ քրեական պատասխանատվություն նախատեսող ճանապարհատրանսպորտային դեպքերով (63-ից 148):

Հաշվետու ժամանակահատվածում նկատելիորեն ակտիվացել է պայքարը թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ: Հայտնաբերվել է նման 231 դեպք (2008 թ. 3 ամսում՝ 57) կամ մոտ 4 անգամ ավելի, ընդ որում՝ դրանցից 88-ը պարունակել են իրացման հատկանիշներ (2008 թ. 3 ամսում՝ 25):

Հաշվետու ժամանակահատվածում ոստիկանության օպերատիվ ծառայությունները եւ տարածքային մարմինները համագործակցելով հանրապետության մյուս իրավապահ մարմինների հետ, հայտնաբերել են տնտեսական գործունեության դեմ ուղղված 130 հանցագործության դեպք, 46 դեպքով կամ 54,8%-ով ավելի, քան նախորդ տարվա նույն ժամանակաշրջանում (2008 թ. 3 ամսում՝ 84), որից 13-ը հայտնաբերվել է ԿՀԴՊ գլխավոր վարչության կողմից (2008 թ. 3 ամսում՝ 4) :

2009 թ. 3 ամսում պետական ծառայության դեմ ուղղված հանցագործություններից հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերվել է կաշառակերության 16 դեպք, 8 անգամ ավելի, քան նախորդ տարվա նույն ժամանակահատվածում (2 դեպք), ընդ որում՝ 5 դեպքը բացահայտվել է ԿՀԴՊ գլխավոր վարչության կողմից:

Չնայած ուսումնասիրվող ժամանակահատվածում նվազել են հրազենի գործադրմամբ կատարված հանցագործությունները (30-ից 27), այնուամենայնիվ ոստիկանության մարմինները շարունակել են ակտիվ աշխատանքը բնակչության մոտ ապօրինի պահվող զենքի եւ ռազմամթերքի հայտնաբերման եւ կամավոր հանձնման

գործընթացի կազմակերպման ուղղությամբ. հայտնաբերվել է գենքի, ռազմամթերքի պատրաստման եւ ապօրինի շրջանառության 73 դեպք, ինչը 43,1%-ով ավել է, քան 2008 թ. 3 ամսում (51): Միեւնույն ժամանակ, ձեռնարկված միջոցառումների շնորհիվ հաշվետու ժամանակահատվածում առգրավվել է բնակչության կողմից կամավոր հանձնվել է ապօրինի պահվող 336 միավոր հրազեն (2008 թ. 3 ամսում՝ 141):

Արձանագրված հանցագործությունների կտրուկ աճի պարագայում հաջողվել է նկատելիորեն բարելավել հանցագործությունների բացահայտման արդյունավետությունը: Ընթացիկ տարվա 3 ամիսներին վարույթում գտնվող քրեական գործերով ընդհանուր հանցագործությունների բացահայտման արդյունավետությունն աճել է 7,9%-ով (59,5%-ից 67,4%), իսկ առանձնապես ծանր հանցագործություններով՝ 35,4%-ով (38,7%-ից 74,1%): Այս ամենի հետ մեկտեղ, 2,3%-ով նվազել է ծանր հանցագործությունների բացահայտման ցուցանիշը (50,5%-ից 48,2%):

Բացահայտման ցուցանիշներն աճել են մի շարք հիմնական հանցատեսակներով՝ սպանություններով (25,0%-ից 70,0%), սպանության փորձերով (66,7%-ից 71,4%), դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելու (72,5%-ից 88,9%), բնակարանային գողության (21,1%-ից 31,2%), խարդախության (70,0%-ից 77,1%) եւ տրանսպորտային միջոցներ փախցնելու (25,0%-ից 35,7%) դեպքերով:

Հանցագործությունների բացահայտման ցուցանիշների նվազում է արձանագրվել անձնական գույքի գողության (41,8%-ից 35,9%), կողոպուտի (50,0%-ից 34,0%) եւ յուրացման կամ վատման (88,9%-ից 62,5%) դեպքերով:

Որպես դրական միտում պետք է նշել նաեւ այն, որ հանցագործություն կատարած անձի ինքնությունը պարզված չլինելու պատճառաբանությամբ կասեցված քրեական գործերով բացահայտված հանցագործությունների թիվն աճել է 9 դեպքով կամ 50,0%-ով (2008 թ. 3 ամսում՝ 18, 2009թ. 3 ամսում՝ 27):

ՀՀ ոստիկանության մարմինների կողմից ձեռնարկվել են որոշակի աշխատանքներ փախուստի մեջ գտնվող հանցագործների հետախուզման ուղղությամբ: 2009 թ. 3 ամիսների ընթացքում ոստիկանության մարմինների կողմից հետախուզվել են 12728 հանցագործներ, որոնցից հայտնաբերվել են 335-ը (2008 թ. 3 ամսում 13023-ից հայտնաբերվել են 343-ը) այդ թվում 12-ը հետախուզվել են սպանության, 9-ը՝ ավազակության, 4-ը՝ կողոպուտի, 22-ը՝ գողության, 31-ը՝ խարդախության, 10-ը՝ խուլիգանության, 13-ը՝ դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու համար: Բացի այդ, հանրապետության տարածքային մարմինների կողմից ձերբակալվել է այլ պետությունների կողմից հետախուզվող 44 անձ:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ